



■ Ազերիները խուճապի մատնուած

Սիւնիքի հարաւ – արեւելեան սահմաններու երկայնքին վերջին օրերուն կը շարունակուէին ատրպէյճանական կազմաւորումներու աշխոյժ գործողութիւնները: Հակառակ Մեղրիի չրջանի խաղաղ բնակավայրերու ոմբակոծումներուն, հայկական կողմը Հայաստանի սահմաններու այս հատուածին վրայ եւս պահպանած է միակողմանի զինադադարը: Մեղրիի սահմաններու նկատմամբ թշնամիի կատարած ռոնձգութիւնները դադրած են անցնող շաբաթավերջին, երբ դարաբաղեան ռազմաճակատին վրայ ծաւալած դէպքերէն ետք թշնամիի մօտ գանդուածային խուճապ ստեղծուած է: Այժմ դարաբաղեան ուժերու կողմէ բացուած մարդասիրական ճամբայէն կը շարունակուի անոնց հոսքը դէպի Ատրպէյճանի արեւելեան չրջանները:

■ Ազերիները չեն ընդունիր զինադադարը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան բանակի լրատուական գրասենեակէն կը հաղորդեն, թէ որպէս պատասխան ՀՀ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի եւ Իրանի նախագահ Ռաֆսանճանիի կոչին, միակողմանի զինադադար յայտարարուած է ԼՂՀ հրամանատարութեան կողմէ, ռազմաճակատի հարաւ – արեւմտեան հատուածին մէջ: Սակայն ատրպէյճանական կողմը դարձեալ խախտելով զինադադարը, ուժեղ ոմբակոծումով յարձակման անցած է Հաղրութի չրջանի հայկական դիրքերուն վրայ: Վերադասաւորելով իրենց ուժերը, դարաբաղեան ստորաբաժանումները յաջողած են կասեցնել թշնամիի յարձակումը եւ ամրանալ իրենց գրաւած դիրքերուն մէջ: Կռիւներու ընթացքին վիրաւորուած է ազատամարտիկ մը. թշնամիի կորուստներու մասին տեղեկութիւններ չկան:

Թշնամին ոմբակոծած է նաեւ Ասկերանի չրջանի հիւսիս – արեւելեան դիրքերը:

Հրադադար կ'ակնկալուի Իրանի միջնորդութեամբ

Հայերու եւ ատրպէյճանցիներու միջեւ Իրանի միջնորդութեամբ նախապատրաստուած հրադադարը ուժի մէջ մտած է երկուշաբթի օրուրնէ: Այս մասին հաղորդում մը կատարած է «Ասոսիէթըք Փրէս» գործակալութիւնը, վկայակոչելով «ԻՐՆԱ» լրատուական գործակալութիւնը: «Ասոսիէթըք Փրէս»ը կը նշէ թէ Իրանի միջնորդութեամբ արդէն քանիցս պատերազմող երկու կողմերու միջեւ յայտարարուած է հրադադար, սակայն ամէն անգամ ան խախտուած է:

«Բաֆոս»՝ Զոհուած

Ազատամարտիկներու ընտանիքներուն

Նախկին իջեւանցի այժմ Կալիկրատի մարզի Զելինկրատ քաղաքի բնակիչ Սամուէլ Վարդանեանի ղեկավարած «Բաֆոս» փիրման իր ներկայացուցիչ Համլէթ Ղուկասեանի միջոցով օգնութիւն ուղարկած է շրջանի գոհուած ազատամարտիկներու ընտանիքներուն: «Բաֆոս»ի ներկայացուցիչը քաղտորհուրդի տնօրէնութեան յանձնեց 1 միլիոն ռուբլի, որ իր հերթին, նշդելով գոհուածներու ցուցակները, իբրեւ օգնութիւն ուղարկած դրամը պիտի բաշխէ իրենց ընտանիքներուն: Յատկանշական է, որ «Բաֆոս»ը իր եկամուտներէն բաժին կը հանէ Կալիկրատի մէջ պատասպարուած հայրենակիցներուն:
